

Հ. ՂԵՒՈՆԻ ԱԼԻՇԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ

«Ապրիլ ամսի սկզբներին՝ 1901 թուին, Վիեննայից մեկնում եմ Վենետիկ՝ թէ՝ Մխիթարեանների վաճիքի հայագիտութեամբ հարուստ գրադարանից օգտուելու և թէ՝ Խոալիան հնար եղածի չափ տեսնելու։ Ուշ երեկոյին հասնում եմ Վենետիկ։ Առաւոտ վաղ ոտքի վրայ եմ. ուզում եմ ժամ առաջ տեսնել Սուրբ Ղազար կղզին՝ Մխիթարեանների վաճիքը։

Նետում եմ ինձ առաջին պատահած գօնդոլի վրայ։ Մի արեւավառ օր է. սեւ գօնդոլը սեւ կարապի պէս ներդաշնակ սահում է Մեծ կանալի կանաչ ջրերի վրայով։ Սա կախարդական քաղաքի ամենամեծ, լայն և երկայն ջրային պողոտան է, որ կիսում է Վենետիկը երկու մասին։ Նրա աջ ու ձախ կողմերում շարենք կանգնած են հրաշագեղ պալատներն ու ապարանները՝ երփներանգ մարմարինով, կառուցուած վենետիկեան չենալ ոնով։ Կարծես հեքիաթների միջով եմ գնում, այնքան անիրական, այնքան երեւակայական են թուում այս բոլորը, սակայն ես հայեացք յառել եմ Ղազունայի՝ հեռուները, որոնում եմ Ս. Ղազարի կղզին... Դանդաղ է քայլում գօնդոլը։ Ես անհամբեր եմ, շտապեցնում եմ գօնդոլավարին։ Մօտենում ենք կղզուն, անյագուրդ նայում եմ կանաչ նոճիների միջից երեւացող կարմիր շենքերին.- «Սուրբ Ղազարն է սա», - ասում եմ ինձ եւ կրկնում... Գօնդոլը կանգ է առնում։ Սրտատրով ոտք եմ դնում այս պատմական, քանկարժեք հողի վրայ»¹։

Դարեր շարունակ Մխիթարեան միարանութեան հայրերը համայն եւրոպայում, Մերձաւոր Արեւելքի երկրներում հաւաքել եւ աչքի լոյսի պէս պահպանել են հայոց հին ձեռագրերը, մագաղաթէ մատեանները, հայ մանրանկարչական արուեստի եզակի կոթողները եւ հնագոյն գրքերը։ Ին'չ բարեբախտութիւն է եղել, որ ար-

1 ԻՍԱՀԱԿԵՑՆ ԱԻԵՏԻՔ, Երկերի լիակատար ժողովածու 14 հ.-ով, հ. XI, Երևան 2020 թ., ՀՀ ԳԱԱ. «Գիտութիւն» հրատ., էջ 108, 109։ Այսուհետեւ՝ փակագծերի մէջ հատորը՝ լատինական, էջը՝ արարական թուերով։

շաւանքների ու պատերազմների, կրակների ու աւերածութիւնների տակ գտնուող մեր հայրենիքը ունեցել է աշխարհիս ամենագեղասեսիլ ու ապահով վայրերից մէկում մի յուսոյ ափ, որն իր դուրգուրանքի տակ է առել հայ ողբերգական պատմութեան վաւերագիր մատեանները, մշակոյթի մասունքները, հայ ձեռագիրն ու հայ գիրքը: Սակայն Սուրբ Ղազարը ոչ միայն մեծն Մխիթարի ուխտի պահպանման նուիրեալն է եւ մի եղակի թանգարան, այլեւ դիտական կենտրոն, որն իրաւամբ արժանացել է միջազգային ճանաչման՝ Մխիթարեան ակադեմիա անուան տակ:

Միաբանական հայրերը, ճնշող մասով գիտնական հայագէտներ, գիտութեան բազում ճիւղերի, բայց առաջին հերթին հայագիտութեան եւ աստուածաբանութեան անձնուէր հետազոտողներ են, որոնք կերտել են հարիւրաւոր հատորներ իրօք որ «մի նշխարով, մի կում ջրով»: Տարիներ եւ տարիներ՝ սահմանափակուած փոքրիկ կղզու անձուկի մէջ, նրանք ծառայել են իրենց ազգին, հաւատին եւ ճշմարտութեանը: Սուրբ Ղազարը գիշերային Արկտուս աստղի պէս դարերի խաւարի ու թոհուբոհի մէջ լոյս է պարզեւել մեր ժողովրդին, եղել անդուլ մարտկոցը Վերածննդի ու Հուսաւորութեան գաղափարների:

Օ՛, իսահակեանը լաւ գիտէր, թէ ինչ հողի վրայ էր ոտք դնում:

Հայր Սիմէոն Երեմեանը առաջնորդում է իսահակեանին հայր Ալիշանի մօտ. «Մտնում ենի հայր Ալիշանի խուցը, մի ոչ մեծ սենեակ ծովահայեաց լուսամուտով: Գրասեղանին հակած է մի ալեւոր՝ փոքրամարմին, անարին, դարուկ մի սուրբ... եւ գրում է:

Մի վայրկեան դիտում եմ անշուր խուցը... Ամէն կողմ գիրք՝ արուների վրայ, սեղանի վրայ. մի պարզ անկողին՝ սնարին Աստուածամօր պատկերը, մի փոքր սեղանի վրայ մի գրաֆինկա՝ ջրով լի, կողին մի բաժակ: Եւ ուրիշ ոչինչ:

Ալիշանը բարձրացնում է գլուխը, խոշորացնյց ակնոցների միշով նայում են ինձ երկու փայլուն, մեծ աշքեր:

Յուզմունքով համրուրում եմ ջլուտ ձեռքը, որ կերտել է այն պատկանելի հասորները:

—Ապրի՛ֆ, զօրանա՛ֆ, ուրկէ՞ կուգաֆ, - հարցնում է Ալիշանը տակալին առողյա ձայնով:

Հայր Սիմէոնը պատասխանում է իմ փոխարէն.

—Ռւսանող է վիեննայի, կովկասահայ է» (XII, 110).

Իսահակեանը կղզու տպարանում գնել էր Ալիշանի մեծ լուսանկարը, եւ այժմ խնդրում է, որ բանաստեղծը իր ինքնապիրը թողնի նկարի վրայ: Ալիշանը կատարում է այս խնդրանքը. «Ալիշանը ամուր ձեռքով դանդաղ ստորագրում է իր ներշնչող անունը» (Երկար տարիներ իսահակեանի տուն-թանգարանի գրքերի պահանում պահւում էր այդ մասունքը):

Իսահակեանը յիշում էր, թէ Նահապետն ինչպէս փորձեց իրեն սուրճ հիւրասիրել, այնքան պարզ, այնքան մարդկային. «Ալիշանը ժպտում է մեղմակի, ապա հարցնում է՝ ի՞նչ եմ ուսանում, ինչքա՞ն պիտի մնամ Վենետիկ:

- Ես կրնամ ձեզի սուրբ հրամցնել, վարդապետ, գնա' մեզի համար սուրբ ապապքէ:

Ես, շնորհակալ լինելով, հրաժարում եմ սուրբից:

- Սակայն դուն գ նա՞,- ասում է Ալիշանը:- Կովկասի հայերը սուրբ չեն սիրեք, դուք թէյ կը սիրէք: Ասկէ շատ տարիներ առաջ պարոն Միանարովը, յայտնի ազգային մը, գիտէ՞ք զինքը: Պետերբուրգէն այցի էր եկած վանքը ու ինձի սամովար մը նուէր քերած էր. ըստ ինձի - «Վարդապետ, թէյ իմնել սովորէ, աշխատանքի ժամանակ աղէկ է»: Զգործածեցի, հոն կը մնայ վանքի մէկ անկիւնին մէց:

Լուսանկարը վերցնում եմ խորին շնորհակալութեամբ. նորից համբուրում եմ բազմաշխատ ձեռքը եւ խուցից դուրս գալիս» (*XI*, 110, 111, 112):

իսահակեանը մտորում է մեծ ճգնաւորի կեանքի ուղու մասին. «Աւելի քան կես դար այս խուցում կամ նման խուցում, ողջ երիտասարդութիւնը, կֆել է նա սեղանին, որի վրայով անցել են անքի գրեւը իին ու նոր լեզուներով, հայեացքը Ադրիականի ոսկի ալիքներին եւ ականջը՝ մշտամիմունց ջրերին, եւ ժողովրդից հեռու, հայրենիքից հեռու, բայց հոգով մօտ, սրտով մօտ երգել է իր «Նուազ»ները, (ինձ հատոք՝ I հ. «Մամկութի», II հ. «Մաղբութի», եւ «Բնութի», III հ. «Հայրութի», IV հ. «Տիրութի» եւ V հ. «Տիրութի»՝ երազելով հայրենիք, տիեզերք, անհունութիւն, յաւերժութիւն...

Այս խուցում, ներշնչուած Մրկվակս Խորենացու եւ Անահիա Ծիրակացու ներկայութեամբ, անխոնց համբերանելով եւ աւիւնով պրայտել է ողջ հայ մատենագրութիւնը՝ պատմական եւ աշխարհագրական, եւ արդի հայ գրականութիւնն ու մամուլը, հաւաքել է անքիւ [տեղեկանելներ] տեղեկութիւններ Հայաստանի ամեն մի վայրի մասին՝ իին եւ նոր:

Ալիշանը գիտնական աշխարհագէտ էր, անդամ եւրոպական աշխարհագրական ընկերութիւնների, հմուտ ու շատ կարդացած էր, խորագրական ընկերութիւնների գործերին՝ Ա. Հումբողյանի ծանօթ եւրոպական գիտնականների գործերին՝

տի, Կ. Ռիխտերի, Էլ. Ռեկիւի, այլեւ հին ու նոր ուղեգրութիւնների: Սակայն նա գրքներից կոմպիլեցիա կազմող չէր՝ չոր ու ցամաք, այլ առանց նիւթական աշբերով տեսնելու Հայաստանը՝ հոգով տեսաւ նա դարերի մշուշների մէջ քաղուած Հայաստանը, տեսաւ տարածութիւններով՝ հեռու վայրեր... այցելեց Հայաստանի ամէն մի կտը, սիրեց, ապրեց ամէն մի հողի կտորը, շնչաւորեց աւերակները, գգուեց, հիացաւ օրանցով:

Իր հատորների եւ մեր հոգիների մէջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց եւ իրական:

Հայաստանը ոչ ոք այնպէս չգիտէ, ինչպէս նա, ոչ ոք այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասէրը: Իրականութիւնը նրա գրչի տակ երազ է դարձել եւ երազը՝ «իրականութիւն» (XII, 111, 112):

Այս առաջին այցը Վենետիկ, Սուրբ Ղազար կղզի յաւէտ տըպաւորուեց Իսահակեանի յիշողութեան մէջ: Գրեթէ կէս դար անց, 1948 թուականին, նաև Երեւանում կը գրի «Ղեւոնդ Վարդապէտ Ալիշան» յուշապատումը՝ կերտուած այնպիսի ջերմութեամբ ու սիրով դէպի մեծ Նահապետը, դէպի Սուրբ Ղազարը, որ ընկալում է ոչ թէ որպէս յուշ, այլ՝ մի ասք, մի ձօն: Երիտասարդ Իսահակեանը անձամբ ճանաչած մեծ Հայորդիներից երեք հոգու է առաւել սիրել եւ պաշտել՝ Խրիմեան Հայրիկ, Ղեւոնդ Ալիշան, Քրիստափոր Միքայէլեան:

1901 թ. ապրիլի 8-ին բանաստեղծը Վենետիկից մի նամակ է գրում Վիեննա տեղի Մխիթարեան միաբանութեան Հայր Բառնաբաս Պիլեզիկնեանին (Իսահակեանին մօտ ու հարազատ մի անձնաւորութեան):

«Յարգելի Հայր Սուրբ.

1901 թ. 8 ապրիլի, Վենտիկ:

Ծնորհաւորում եմ Ձեր Զատիկը, երեկ սուրբ Ղազար էի. պատարագին: Լաւ՝ անցաւ: Հ. Ալիշանը հիւանդ էր, հիմա լաւ է. զարմանալի ուժեղ ոգու տէր մարդ է. զարմանալի մարդ է. հիացած եմ իրենով... Աւետիք Իսահակեան»:

Հարկ է ասել, որ թէ՝ Վիեննայի եւ թէ՝ Վենետիկի (Սուրբ Ղազարի) Մխիթարեան միաբանութեան հայրերը արտակարգ բարելից եւ հոգատար վերաբերմունք են ցուցաբերել Իսահակեանին եւ իր առաջին այցին, երբ ինքը բոլորովին երիտասարդ բանաստեղծ ներկայացաւ հայրերին եւ հայ բանաստեղծութեան Նահապետ Ղեւոնդ Ալիշանին եւ թէ՝ յետագայ տարագրութեան տարիներին:

Յիրաւի, շատ թանկ էին իսահակեանի համար այն ժամերը, որոնք նա անց էր կացնում Մխիթարեան միաբանութեան հարուստ գրադարանում։ Գրքերը, որ լեզենդ էին իր համար, բանաստեղծը կարող էր առնել ձեռքը, կարդալ ու անյագ կարդալ։

Սակայն ամենամեծ լեզենդը Ղեւոնդ Ալիշանն էր: «Ղեւոնդ Վարդապետ Ալիշան» մեր յիշատակած յուշապատումի մէջ իսահակեանը պատմում է նոյն թուին Նահապետի հետ ունեցած իր երկրորդ հանդիպման մասին։ 1901 թ. գարնանը բանաստեղծը Պետերբուրգի հայ ուսանողների մի խմբակից նամակ էր ստացել, խնդրանքով որոշ կենսագրական տեղեկութիւններ առնել Հայր Ալիշանից, ինչպէս նաեւ իմանալ նրա կարծիքը «Հայկական հարց» վերաբերեալ։ Այս նիւթերը տպագրուելու էին յիշեալ խմբակի ձեռնարկած «Անուանի հայերի կենսագրութիւններ» ժողովածուում։

«Այս նամակով զինուած, գնացի Ալիշանի մօտ, - գրում է իր յուշերում Խահակեանը։ Ալիշանը հեգինանքով ասաց։

- Աս ի՞նչ ծանր քար են դրած քո մէջին։ Վախեցա՞ր. գրելի՞ք բան մը չկայ։ Ես կենսագրութիւն չունիմ։

Ասաց, որ իրեն 8-9 տարեկան հասակում Կ. Պոլսից բերել են Ա. Ղազար, նուիրել են վաճքին։ Սկսել է աշակերտել միաբանութեան դրանցում, աւարտել է շատ մատադ տարիքում, ուսանող է եղել եւ մի քանի տարի էլ Փարփակ Մուրադեան հայ վարժարանում դասասուն կարիչ է եղել։ «Եւ Քանի մը գրքեր եմ գրած։ Ուրիշ ալ ըսելիք չունիմ։ Գրքէ-գիրք՝ ատ է եղած իմ նամբան։ Ուրիշ տեղեր չեմ գացած»» (XI, 112)։

Այսպիսին է հակիրճ պատմութիւնը այդ հսկայ արարչի հսկայ կեանքի։ Ինչ աստիճան համեստութիւն, սեփական անձը ստուերում պահելու աննախաղէպ օրինակ։

Պետերբուրգեան ուսանողների երկրորդ խնդրանքը կատարելն աւելի գժուար էր, քանի որ Ալիշանը պիտի յայտնէր իր դիտարկումները դարասկզբում նոր հասակ առնող «Հայոց հարց» վերաբերեալ։ Իսահակեանը իր յուշագրութեան էջերում ջանասիրաբար բերում է Ալիշանի ասածները եւ, ինչպէս ինքն է գրում. «որ ես շարադրում եմ արեւելահայ բարբառով»։

Այստեղ ամբողջութեամբ մէջ բերել կամ վերապատմել Հայր Ալիշանի մտքերը հարկ չկայ, քանի որ իսահակեանի երկերում դըրանք քազմից տպագրուել են։

Ակնյայտ էր Ղեւոնդ Ալիշանի ասածներից այն, որ հայ ժողովուրդը գիտակցելով, որ սեփական ուժեղութ չպիտի կարողանար

թօթափել թուրքական լուծը, ստիպուած եղաւ յոյսը դնել քրիստոնեայ Եւրոպայի, քաղաքակիրթ պէտութիւնների օգնութեան վրայ, եւ դա եղաւ մեր ժողովրդի «մեծագոյն եւ բազմագէտ սխալը», - ըստ Ալիշանի:

Ալիշանը յիշում է, որ 1890-ական թթ. կոտորածների ժամանակ կարդինալ թէրգեանը գնում է Հռոմի պապի մօտ եւ խնդրում, որ նա դիմում անէ մեծ պէտութիւններին՝ սաստելու ջարդարար թուրքին: Հռոմի պապը պատասխանում է. «Այդ քրիստոնեայ մեծ պէտութիւններն են հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ» (XI, 113).

Այդ շրջանում Ալիշանը համոզուած էր, գրում է իսահակեանը, մէջ բերելով նահապետի մտորումները. պէտք է երես չուռ տալ եւրոպական պէտութիւններից, դադարեցնել հայ յեղափոխական ընկերութիւնների գործունէութիւնը, «պէտք չէ գրգուել քուրքի մննարական արիւնը: Պէտք է ընդմիշտ երես շրջել այդ փչացած նւրոպայից»: Ալիշանը ասում է իսահակեանին, որ Պոլսոյ հայերի պատրիարք Սրբազն Օրմանեանը, լինելով փորձուած քաղաքագէտ, բարեկամական յարաբերութիւններ է մշակում սուլթան Աբդուլ Համիդի հետ. «Պէտք է աշակցել նրան: Մի բառով՝ պէտք է համակերպուել, ուրիշ ելք չեմ տեսնում հայերի համար» (XI, 113):

Ցիշենք, որ այս խօսքերը Ալիշանն ասում էր 1901 թ., մի ժամանակահատուածում, երբ զանգուածային ջարդերը դադարեցուել էին, եւ նահապետին թւում էր, թէ թուրքը կարող է կասեցնել յանցագործ ծրագրերը: Ինչ խօսք, որ նման տեսակէտը, իսկ առաւել եւս Օրմանեան պատրիարքի «հաշտուողական» քաղաքականութիւնը սկզբունքապէս անընդունելի էին «Հայդուկի երգերի» հեղինակի համար:

Այլ էր նրանց զրոյցի յաջորդ մասը, երբ Ղեւոնդ Ալիշանը պատմում է ոռուսական եկեղեցու սինոդի օբեր-պրոկուրոր, յայտնի սլաւոնաֆիլ, իշխան Պոբեդոնոսցելի Սուլք Ղազար կատարած այցելութեան մասին. «Գրեք բոլոր միարանները նրա պատուի համար ուի վրայ են եւ բայցում են նրա հետ: Նա տեսնում է գեղեցիկ տաճարը, նոխ գրադարան-մատենադարանը, տպարանը, բանգարանը... Երբ նըստում են հիւրասենեակում մի բաժակ սուրբ խմելու, այդ ոուս մեծ պաշտօնեան, շնորհակալութիւններ յայտնելով միարաններին, ասում է.

- Ես հիացած եմ ձեր աշխատանքի, համբերութեան եւ սիրոյ Ակատմամբ՝ հանգելա ձեր ազգի, բայց ցաւում եմ, որ դրանք իզուր շանքեր են, անօգուտ, աննպատակ: Որի՞ն համար են այդ անձնագրումները, մի փոքր ժողովրդի համար՝ ցրուած երկրի երեսին եւ մատնուած կո-

բուսափի: Թուրքիայում կոտորում են հայերիդ շարունակ, Ռուսիայում էլ հայերը ոչ ոռու ժողովուրդների հետ դատապարտուած են շուտ կամ ուշ ձուլուելու ոռու մեծ ժողովրդի մէջ:

Բոլոր միարանները սոսկացին, սակայն, արքահայրը (Խգնատիոս եպիսկոպոս Կիլրեղեան) հանդարտութեամբ պատասխանում է.

- Հայ ժողովուրդը շա'տ աւելի ահեղ ժամանակներ ու րոնութիւններ է տեսել, նուազել է քուով, բայց մնացել է ոգով կայուն եւ անվար: Մեր յոյսը Աստծու վրայ է, մեր ժողովրդի տոկունութեան եւ պատմութեան անիմանալի ընթացքի վրայ:

Բոլոր միարանները անխօս հեռանում են դահլիճնից, իսկ մեծանուն չինովնիկը, բարտուղարի հետ միայնակ, գնում է նաւամատոյց» (XII, 114):

Այսպէս էլ ապրել է մեր ժողովուրդը, յիշելով իր հերոսական անցեալը, յիշելով, որ աւելի ծանր օրեր է ունեցել եւ անց է կացրել՝ յոյսը դրած Աստծոյ եւ պատմութեան «անիմանալի երթի» վրայ:

Իրօք որ անիմանալի ընթացք, եթէ Ալիշանը իմանար, թէ ի՞նչ է սպասում իր ժողովրդին մէկ տասնամեակ անց:

Այսպէս էին անցնում օրերը Վենետիկում: Վենետիկն իր առինքնող գեղեցկութեամբ գերել էր իսահակեանին: Առաջին այցի արջանից ուղեւորական նօթեր կամ գրառումներ այս քաղաքի վերաբերեալ չեն պահպանուել, այդպիսիք շատ կը լինեն «Յիշատակարանի» ուշ շրջանի գրառումներում, սակայն Վենետիկը աներկ-բայօրէն միրճաւում էր բանաստեղծի գիտակցութեան մէջ, նրա ոռմանտիկ, գեղեցիկը պաշտող ու գնահատող հութեան մէջ: Վէպը այս քաղաքի հետ 1901 թուականին դեռ միայն ընձիւզներ էր արձակում, շարունակութիւնը լինելու էր տասնամեակներ անց...

Վենետիկն իր աներեւակայելի գեղեցկութեամբ գերել էր պօչտին: Ցիրաւի, առաջին անգամ էր օտար ափը նրա համար այսքան սիրելի եւ գիւթիչ, բայց եւ այնպէս նա փափագում էր օր առաջ տուն հասնել: Մօտենում էր հրաժեշտի պահը. «Երբ մեկնում էի Վենետիկից, գնացի Ալիշանի մօտ՝ վերջին անգամ տեսնելու եւ հրաժեշտ առնելու: Օրինեց ինձ, բարիքներ մարթեց եւ ողջոյն ուղարկեց Խրիմեան Հայրիկին:

- Ինձամէն հարիւր օրով մեծ է ան-, ասաց Ալիշանը, բայց կ'ըսեն, որ շատ առնյգ է, ան կը նստի, հարկաւ այդպէս է. ան Մասիսի հովին տակ կը քնանայ, Արամսի ջուրը կը խմէ, Հայաստանի հաց կ'ուտէ, անոր հողի ուժը կ'առնե...» (XII, , 114-1145):

Ինչ պարզ ու հիանալի բառեր: Որոնք նոյնութեամբ, մի եղութեակ ամիս անց, բանաստեղծը պիտի հասցնէր Խրիմեան Հայրիկին:

Իսահակեանը յիրաւի գիտակցում էր, որ սա իր վերջին հանդիպումն էր Ալիշանի հետ, եւ նա ճակատագրից շնորհակալ էր, որ իրեն բախտ էր վիճակուել ծանօթանալ մեծ հայի հետ, լսել նրա իմաստուն զրոյցները: Փոքր-ինչ առաջ անցնելով, ասենք, որ հայ բանաստեղծութեան Նահապետի մահուան բօթը իսահակեանն առաւ նոյեմբերի կէսերին հայրենի Ալեքսանդրապոլում (Ալիշանը մահացել է 1901 թ. նոյեմբերի 9 (22), Ս. Ղազար կղզում): Իսահակեանը ներկայ է եղել Ալեքսանդրապոլում Հայր Ալիշանի հոգեհանգստի արարողութեանը եւ այդ մասին գրել է իր «Յիշատակարան»ում. «Կատարեցին հայ կարողիկների եկեղեցում հ. Ալիշանի համար հոգեհանգիստ: Կարողիկների վարդապետ Պ. Նահապետեանը խօսեց՝ «Գիտե՛, ժողովրդեամբ, սա ի՞նչ նշանակութիւն է, ցոյց տալով հոգեհանգստի դագաղը, - սա հայր Ղեւոնդի հոգեհանգըստուրիւմն է. ո՞վ էր հայր Ղեւոնդ, Միհրարեամ ուխտի ժահանայ էր, որ 40 տարի աչք՝ կը ծուր, գրիչ կը շարժէր ազգի համար, ամքի գիտական ու հոգեւոր գրքեր գրեց, իմի՞ն նա մեռաւ, լոեց Աւարայրի թլրուլը...»: Իսահակեանը մանրամասնորէն վերապատմում է այդ արարողութիւնը եւ նկատում. «Ներկայ էր պ. քաղաքագլուխը, անդամներից քաղ. վարչութեան, երիտասարդներ ու տիկիններ, չկար ո՞չ մի հայ լուսաւորչական հոգեւորական» (Հ., 279, 280):

Հայրենիք վերադարձած բանաստեղծը խորապէս ազգուել էր՝ պաշտելի Նահապետի մահուան բօթն առնելով:

Իսկ տարեկերջին իսահակեանը Ալեքսանդրապոլում ստանում է Վենետիկից հայր Եսայի վարդապետ Տայեցիի իրեն գըրած նամակը, ուր մանրամասն պատմում է հայր Ալիշանի մահուան մասին.

«29 դեկտ. 1901. Վենետիկ Ս. Ղազար

Կարդացի Զեր գրած զգայուն տողերը Ալիշանի մահուան առքիւ, որոնք վերատին պատկերեցին մտացս եւ հոգույու մէջ, դեռ բարմ եւ արտասուխ ողողեալ տխուր' յուշեր, ո՞հ, ի՞նչ դառնակակիծ գիշեր էր այն գիշերը, տխուր եւ շատ տխուր, եթէ միակ միհրարութիւն մը ունեցայ այն մեծ եւ վսեմ, սուրբ եւ պաշտելի Նահապետին մահուան օրն, այս էր որ գիշերն ի լոյս անցնելով նորա սենեկին մէջ, բաղդ ունեցայ իւր վերջին շունչը բազկացս մէջ աւանդելու. եւ որպիսի բաղդ» (ԱհլԱ):

Հայր Ղեւոնդ Ալիշանը մշտապէս տպաւորուել էր իսահակեանի գիտակցութեան մէջ, որպէս մեծագոյն հայագէտ գիտնական, աշխարհագէտ եւ բնագրագէտ, լեզուաբան եւ աստուածաբան, հայ բազմադարեան պօէզիայի պատմութեան մէջ իւր առանձնայտուկ եւ բարձր տեղը ունեցող բանաստեղծ:

Երբ Մոսկովայում լոյս է տեսնում Վալերի Բրիւսովի կազմած “Պօզնիա Արմենի” անթոլոգիան եւ մէկ տարի անց այն հասնում է ժնեւում բնակուող իսահակեանին, նաև հետեւեալ կարծիքն է գրում իր ընկերոջը՝ Գարեգին Լեւոնեանին.

«1917, 28 մարտի, Ժնեվ»

Ստացայ վերջապէս, “Պօզնիա Արմենի”, այն՝ հոյակապ գիրքը: Մեծ ջանք, մեծ նաշակ. միայն ափսոս, որ մեծ տեղ է տուած Ծառուրեանին, եւ շա’տ քիչ Դերենիկին, Սիամանքոյին, Վարուժանին, Ալիշանին» (VI, 170):

Այս պարագայում, տալով Ղեւոնդ Ալիշանի անունը, իսահակեանը մէկ անգամ եւս հաստատում է, թէ որքան բարձր է նա դասում Ալիշանին որպէս բանաստեղծ: Եւ կ'ուզենար, որ “Պօզնիա Արմենի” նման հեղինակաւոր գրքում առաւել ամբողջական շարքով ներկայացուած լինէր Ալիշանի նման մեծութիւնը:

Իսկ ընդհանրապէս խօսել Ալիշանի հանդէպ ունեցած իսահակեանի հայեացքների, տեսակէտների, գնահատականների մասին, կը նշանակէր բացայացտել բանաստեղծի մի բարդ ու միասնական կոնցեպցիան առ Ալիշան, ինչը կը նշանակէր առ Հայաստան աշխարհ, հայ ժողովրդի պատմութիւն, առ Հայոց եկեղեցի, «Հայկական հարց», Հայոց պօէզիա, եւ վերջապէս, հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի ու Ալիշանի տեսլականը Հայաստանի ապագայի: Անշուշտ, այս ամէնը լաւ գիտակցելով, եւ մանրադիտակի տակ բազմիցս ընթերցելով իսահակեանի «Ղեւոնդ Վարդապետ Ալիշան» յուշապատումը, ժամանակի հաւատաքննիչները գերծ մնացին 1948-ի տարեվերջին յայտնուած Վարպետի գաղափարապէս պայմիթիւնավտանգ Յուշ անմեղ անունը կրող գրութեան տպագրումից եւ այն պահեցին արխիւային գզրոցներում, մինչեւ Վարպետի կեանքի աւարտը: Եւ թոյլ տուեցին տպագրել այն գրման օրից միայն տասնմէկ տարի անց՝ 1959 թուականին՝ իսահակեանի երկերի քառահատորեակի չորրորդ հատորում:

Այնպէս որ, նոյնիսկ այդպիսի վիթխարի հեղինակութեան՝ Աւետիք իսահակեանի անունը չնպաստեց, որ տպագրուի Յուշը Ղեւոնդ Վարդապետ Ալիշանի մասին: Եւ այն «Ուստա Կարօ» գէպի,

«Մասսա Մանուկը» պօչմի կողքին մնաց Վարպետի անտիպ երկերի շարքում: Մինչեւ որ չեկաւ նրա ժամանակը:

Սակայն իսահակեանի Ալիշանականը սրանով չի վերջանում: Անսխալօրէն կարելի է ասել. Ալիշանը անջնջելի հետք է թողել իսահակեանի մտածողութեան, իսահակեանի հոգեկան աշխարհի վրայ: Ահա իր «Յիշատակարան»ի 1917 թ. ապրիլի 27-ի գրառումներից մէկում իսահակեանը, մտորելով Հայաստանի հանդէպ ժամանակակից Եւրոպայի վարած քաղաքականութեան մասին, գալիս է շատ կարեւոր մի եզրակացութեան՝ «Եւրոպան միանգամայն բարյագուրկ է, հոգեալս փոսած, եւ կամաց-կամաց ընկնում է տգիտութեան եւ անզգայութեան մէջ. շահը, պզտիկ նիւթական շահը, տիրապետում է բոլոր հոգիների եւ մոտերի վրայ, շահով է շափում ամէն մի արժէք, ով նրանց սանտիմ է տալիս, նա ազնիւ է եւ սիրելի – ուղղակի պոռնիկի հոգերանութիւն: Այդ է պատճառը, որ ահաւոր, պատմութեան մէջ չտեսնուած հայկական շարդերը ո՛չ միայն զայրոյթ շարուցին նրանց մէջ դէպի բուրքերը, այլ շանագին օգտագործեցին այդ արիւնը՝ դառնալ փաստարան եւ պաշտպան բուրքերի համար, ստանալով նրանցից վարձ ու հատոյց, կոնցեսիաներ, նոյնիսկ մեղադրեցին հայերին...»

...ինչպէս հայր Ալիշանն ինձ 1901 թ. ասաց՝ «Աւերուած է Եւրոպայի բարոյականը». խաչակիրների Եւրոպան չէ, այլ՝ բուրժուա սոցիալիստ եւ բուրքի սանտիմը տիրող: Մենք կարծում էինք, թէ հայկական շարդերը պիտի խոցեն ազնիւ Եւրոպայի խիդեք, նա պիտի զայրանայ, յուզուի եւ միահամու միանայ եւ կոիւ յայտարարի բուրքերի դէմ... Որքան միամիտ էինք...» (Հ. 325):

Սա 1917 թուի ապրիլին էր, եւ եղեռնից անցել էր ընդամէնը երկու տարի: Բնականաբար վենեստիկում ապրած տարիներին (1920-1923) Ալիշանին իսահակեանը շա'տ եւ շա'տ առիթներ է ունեցել յիշելու: Այցի գնալու, կանգնելու լրիկ այն խուցի շեմին, ուր նա առաջին անգամ պատահեց հայութեան նահապետին՝ ուղիղ քառորդ դար առաջ:

Եւ ինչպէս ցոյց են տալիս «Յիշատակարան»ի այլ գրառումները, պօչտի նամակները, նահապետի կերպարը միշտ իսահակեանի հետ է եղել:

Իսահակեանի մերձաւոր շրջանին յայտնի էր այն իրողութիւնը, որ Փրանսսիական Աւալոն գիւղում, ուր իսահակեանը հանգստի էր գնացել իր ընտանիքի հետ, մէկ անգամ գիշերով, շատ իրատեսական ձեռով բանաստեղծին այցի է գալիս Ալիշանի ուրուականը եւ նրանք ճանաչում են իրար եւ նրանց մէջ՝ կարճ,

բայց դրամատիկ զրոյց է ծագում, որը պատկերում է իսահակեանն իրենից անբաժան «Յիշատակարան»ի էջերում:

«1934 թ. Սեպտեմբերի 26, Աւալոն

Գիշերս, երազիս մեջ տեսայ Հայր Ղեւոնդ Ալիշանին. պատմում էի նրան Հայաստանի մասին:

Նա ասաց.

- Մի' ասեր, մի' ասեր, մի' ասեր...

Չուզեցաւ լսել Հայաստանի աւերտերի մասին» (Հ., 393).

Ու թէեւ «Յիշատակարան»ում հանդիպումը ներկայացւում է որպէս երազ, բայց իրականում, ինչպէս եւ միշտ վկայում էր մտերիմների հետ զրոյցներում իսահակեանը, դա ոչ թէ երազ է եղել, այլ շատ ռէալ հանդիպում նահապետի ուրուականի հետ:

Ա.Ի.ԻԿ ԻՍՍՀԱԿԵԱՆ